

**ՀՅՈՒԽԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*⁸**

Էդիկ Մինասյան

Բամալի բառեր՝ հայ համայնք, հայ գաղղակամություն, Յյուսիսային Կովկաս, խորհրդահայ համայնքներ, Կրասնոդարի երկրամաս, ժողովրդական գործընթաց:

Նայտնի իրողություն է, որ հայկական համայնքների պատմությունը հայ ժողովրդի պատմության անքակտելի ու բաղկացուցիչ մասն է կազմում: Նարավոր չէ հայոց ամբողջական, գիտական պատմությունը շարադրել առանց հայկական համայնքների պատմության: Ուստի ամենակի էլ պատահական չէ, որ հայ համայնքների պատմության ուսումնասիրությունն ու նշանակությունը հաճախ են ընդգծել հայ նշանավոր գործիչների կողմից: Նայտնի գրող ու մտածող Յովհաննես Թումանյանն իր ժամանակի լայնաշխոհությամբ ու խորաթափանցությամբ կարևորեց հայկական համայնքների պատմությունը լուսաբանելու խնդիրը [1]:

Անվանի պատմաբան Լենոն գրել է. «Նայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, որ նա կազմվում է հայ գաղութների (համայնքների) հզոր ազենցության տակ, համարյա նրանց ծեռքով միայն: Բուն Նայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչված շարժումներով...»

Նաևկանալ և բացատրել այն ամենը, ինչ 19-20-րդ դարերում կատարվեց բուն Նայաստանում այնպիսի արագասահ ուժգնությամբ, որպիսին չի տեսել հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, եթե նրանցից անջատենք գաղութները: Այս բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութների և նայր երկրի կյանքը միախառնված, ամբողջացած է և անկարելի է բանարար գծեր դնել երկու կողմերի մեջ» [2]:

Ահա թե ինչու, եթե հայ ժողովրդի աշխարհասփյուռ հատվածի նշանակության տեսանկյունից ենք դիտարկում կատարված հետազոտությունը, ապա պետք է փաստել՝ հայկական համայնքների պատմության անցյալն ու ներկան հայոց պատմագիտության թույլ ուսումնասիրված ասպարեզներից են: Եվ դա հասկանալի է: Միայն վերջին տասնամյակներում հնարավոր դարձավ շրջադարձ կատարել դեպի պատմագիտության կողմից պայմանների բերումով անտեսված այս բնագավառը:

Անշուշտ, առաջիկայում հայկական համայնքների պատմության խորն ու բազմակողմանի, լայն հետնախորդի վրա իրականացվող հետազոտական աշխատանքների դրվագների արդյունքները կարող են մեզ համար անծանոթ նոր էջեր բացահայտել՝ նոր փաստերով ու իրողություններով հարստացնելով հայոց պատմությունը:

Յյուսիսային Կովկասի հայկական համայնքները նշանակալի դեր են խաղացել հայ-ռուսական հարաբերություններում՝ նպաստելով դրանց հետագա զարգացմանը: Ուստահայ համայնքների, այդ թվում Յյուսիսային Կովկասի հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը գիտական հետազոտության կայուն հիմքների վրա դրվեց միայն 20-րդ դարի երկրորդ կեսին, որի արդյունքում բացահայտվեց ու ցույց տրվեց հայկական այդ համայնքների ոչ միայն սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական, այլև հոգևոր-մշակութային կյանքի պատմությունը, որը խիստ կարևոր է թե՝

* Յոդվածն ընդունվել է 18.01.19:

Յոդվածը տպագրության է երաշխավորել «Լրատուի» գլխավոր խմբագիր, պ.գ.թ., դոցենտ Ա. Վարդանյանը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

հայագիտության և թե՝ ռուսական պատմագիտության համար:

Յյուսիսային Կովկասի երկրամասը վաղուց ծանոթ էր հայերին, սակայն հայկական համայնքների ձևավորումը կատարվել է ավելի ուշ: Յայտնի է, որ 17-րդ դարում հայկական համայնք կար Ներբենդում [3]: Յայությունը Յյուսիսային Կովկասում հոծ զանգվածով բնակություն հաստատեց միայն 18-րդ դարում, ինչը պայմանավորված էր Ռուսաստանի կայսեր կողմից հայերին տրված արտոնություններով: Յայտնի է, որ Պետրոս I-ի պարսկական արշավանքի անհաջող ելքից հետո՝ 1724 թ., կայսրը Ռուսաստանում բնակություն հաստատող հայերին մի շարք արտոնություններ շնորհեց: Այդ նույն տասնամյակում Ներբենդում, շրջակա գյուղերում, Սուլր Խաչում և Սերծկասայյան բնակավայրերում բնակություն հաստատեցին Անդրկովկասի, Պարսկաստանի և Թուրքիայի հայաբնակ վայրերից գաղթածները: Սակայն ռուսների կողմից այդ տարածքները լքելուց հետո բնակչությունը, այդ թվում և հայությունը, փոխադրվեց Ղալարի նորակառույց ամրոցը [4]: Սուլր Խաչից Ղալար տեղափոխվեց նաև հայ-վրացական էվկադրոնի գիմվորականների մի մասը:

Ռուսական կառավարությունը պահանջ էր զգում կովկասյան գծում ունենալու ևս մեկ հենակետ՝ ոչ միայն կայսրության դիրքերն ամրապնդելու, այլև Յյուսիսային Կովկասն Անդրկովկասի հետ կապելու համար:

1763 թ. հրապարակված կայսերական հրահանգով Մոզդոկում վերաբնակվողներին տնտեսական և իրավական արտոնություններ էին տրվում: Դրա հետևանքով այլ ազգերի թվում Սոզդով փոխադրվեցին հայեր շրջակա բնակավայրերից, ինչպես նաև Դիմինց, Աստրախանից: Նրանց թիվը հասմուն էր 300-ի [5]:

Դարավերջին հայ գաղթականության նոր հոսք է սկսվում դեպի Կովկասի հայաշատ բնակավայրեր, մասնավորապես Ղալար և Սոզդով:

Ռուսական կառավարությունը, նկատի առնելով երկրամասի անմարդաբնակ տարածքների բնակեցման և տնտեսական զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաև Սև ծով դուրս գալու իր վաղենի ցանկությունը, որոշակի քայլեր ձեռնարկեց: 1799 թ. Պավել I-ի հրովարտակով սահմանվում էին նորաբնակների, այդ թվում՝ հայերի իրավասությունները: Յայերին թույլատրվում էր դատավարությունը վարել ազգային սովորությունների և իրավական նորմերի հիման վրա: Յայ վաճառականներն ազատվում էին գիլիհանների մեջ ընդգրկվելուց ստանալով երկրում և նրա սահմաններից դուրս ազատ առևտուր անելու, ամեն տեսակ արդյունագրությամբ գրաղվելու իրավունք: Կառավարության տված հնարավորությունները խթանում էին հայ բնակչության մերհոսքը նապաստելով նոր գաղթավայրերի ձևավորմանը [6]:

Ստավրոպոլի բերդի կառուցումից հետո այնտեղ հաստատվեցին առևտրականներ և երկրագործներ: 19-րդ դարի առաջին տասնամյակներում արդեն ձևավորված էր տեղի հայ համայնքն իր եկեղեցինով: Զևավորվեց Եկատերինողարի (Կրասնոդարի) հայկական համայնքը: Վլադիկավազի նորակառույց բերդաքաղաքը նույնպես բնակատեղի դարձավ Կովկասի տարրեր բնակավայրերից գաղթած հայերի համար:

19-րդ դարի 30-ական թվականներին հայ համայնքն ուներ իր եկեղեցին: Յամանաման ձևով հայկական համայնքներ ձևավորվեցին Սուլր Խաչում, Գրոզնիում, Պյատիգորսկում, Գեորգիևսկում [7]:

Չերքեզահայերը 1839 թ. Յյուսիսային Կովկասում հիմնադրեցին Արմավիրի հայկական համայնքը, որն արագործեն ամեն և դարձավ երկրամասի տնտեսական կարևոր կենտրոն: Չերքեզահայերի մյուս մասը բնակվեց Կուրամի և Սերծսևծովյան շրջաններում՝ ստեղծելով իր համայնքները: Այդ գործում մեծ էր հայազգի ծովակալ Սերեբրյակովի (Արծաթագործյան) ծառայությունը, որը, հարգելով Ներսես Աշտարակեցու միջնորդությունը, հայերին բնակեցրեց Նովոռոսիյսկում, Անապայում և այլ վայրերում [8]:

Յյուսիսային Կովկասում ձևավորված հայկական բազմաթիվ համայնքների թվում մշտապես առանձնացել են Ղալարը, Մոզդոկը, ավելի ուշ շրջանում՝ Արմավիրը: Ղալարը

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

և Մողդոկը հիմնադրվեցին որպես ռուսական սահմանային քաղաք-ամրոցներ և ոչ որպես զուտ հայկական բնակավայրեր, թեպետև հայ բնակչությունը նրանցում գերակշիռ դեր ուներ: Օգտվելով կառավարության ընծեռած արտօնություններից՝ ղղլարահայերը առևտրատնտեսական լայն գործունեություն ժավալեցին: Նրանք, շրջակա ճահճուտները մշակելով, դարձրին ընդարձակ պտղատու այգիներ [9]:

Կայսերական շնորհագրերը Դյուսիսային Կովկասի հայկական համայնքներում կիրառվում էին մասնավորապես Ղղլարի և Մողդոկի նկատմամբ: Նրանց թույլատրվում էր կատարել ազատ և անկախ առևտուր ինչպես Ռուսաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Խրախոսավում էր արդյունաբերությամբ գրադվելու նրանց ցանկությունը: Այդ երկու համայնքներմ ազատված էին պետական հարկերից և սուրբերից: Կայսերական արտոնագրով հայերը տնօրինում էին նաև համայնքի առօրյա մյուս գործերը, հետևում հարկերի հավաքմանը, համայնքի վարչատնտեսական բոլոր հարցերին [10]:

Դատավարությունը, ինչպես նաև ամրող գործավարությունը մինչև 19-րդ դարի 40-ական թվականները կատարվում էր հայերեն՝ «Աստրախանի հայոց դատաստանագրի» հիման վրա, որը նպաստում էր համայնքի ազգային դիմագօթի պահպանմանը: Ղղլարում և Մողդոկում հայկական դատարանները գործնեցին մինչև 1841 թվականը, իսկ նոր Նախիջևանում այն պահպանվեց մինչև 60-ական թվականների վերջերը:

Բացի աշխարհիկ դատարաններից հայկական համայնքներն ունեին նաև հոգևոր կառավարչություններ, որոնք տնօրինում էին հոգևոր կյանքի հարցերը՝ եկեղեցու աստիճանավորների պարտականությունները, նրանց իրավունքները, գանձվող հաստիքների չափը, որանց տնօրինման եղանակները և այլն: Դյուսիսային Կովկասի հայ բնակչությունը զգալի հաջողություններ ունեցավ գյուղատնտեսության մի շաբթ ճյուղերում, մասնավորապես հացահատիկային հողատարածքների մշակման ու անասնապահության ոլորտում: Այդ ճյուղերով առավելապես գրադվելում էին Ղղլարի և Մողդակի շրջակա հայկական գյուղերի բնակիչները: Դայնը նկատելի ներդրում ունեին նաև երկրանասի այգեգործության և բանջարաբուծության ոլորտներում:

Կառավարությունը հասուկ ուշադրություն էր դարձնում երկրամասում թթենու աճեցմանը, շերամապահության և մետաքսանշակության զարգացմանը:

19-րդ դարում արհեստագործությունը հյուսիսկովկասյան համայնքնային տնտեսության կարևոր ճյուղերից մեկն էր: Ղղլարը, Մողդոկը և մյուս հայկական համայնքները համարող հայերի մեջ թիվ էին կազմում արհեստագորները, որոնք նոր պայմաններում, տեղական պահանջներին համապատասխան, արմատավորել և զարգացնում էին արհեստների այս կամ այն ճյուղը:

Առևտրի միջոցով ծեռք բերված մետաղները (այդ թվում՝ բանկարժեք) նպաստեցին հայերի ավանդական արհեստների՝ դարբնության, հյուսնության, ուկերչության, արծաթագործության զարգացմանը, լայն տարածում էին գտնել նաև արհեստագործության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին գորգագործությունը, կարպետագործությունը, հյուսնությունը, աղյուսագործությունը, տակառագործությունը և այլն: Արհեստագործությանը գուգահեռ զարգանում էր նաև արդյունաբերությունը: Դյուսիսային Կովկասի հայկական համայնքներում լայնորեն գրադվելու էին նաև զինեգործությամբ ու օղեգործությամբ:

Դյուսիսային Կովկասի հայ համայնքները մասնակցում էին նաև երկրամասի հասարակական-քաղաքական կյանքին: Ղղլարում կենտրոնացած հայ-վրացական էւկաղորնը, որը մեծ մասամբ գլխավորում էին հայ զինվորականները, մասնակցում էր Ռուսաստանի կովկասյան քաղաքականությանը: Դայկական համայնքները սերտորեն կապված էին մայր հայրենիքին: Շփումների շնորհիկ հայ համայնքները մշտապես պահպանում էին իրենց լեզուն, հավատը, ազգային սովորությունները: Այդ գործում զգալի էր կրթական-լուսավորչական և բարեգործական հաստատությունների դեմքը: Ղղլարում 1880 թ. գործում էր բարեգործական ըմկերություն, որը բազմից օգտակար եղավ հայրենակիցներին նյութական միջոցների հավաքման, կրթության և առողջապահության ասպարեզում նրանց օգնություն ցուցաբերելու գործում:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Երկրամասի հայկական համայնքներում մշակույթին ուներ իր առանձնահատուկ տեղը: Յատկապես առաջընթաց նկատվեց կրթական, թատրոնական և երաժշտական ոլորտներում: Յյուսիսային Կովկասի հայկական համայնքներում կրթամշակութային կարևոր կենտրոն էր Ղզլարը, որտեղ առաջին հայկական դպրոցը բացվեց 1818 թ. Գևորգ Խուրովի հովանափորությամբ: Երկու տարի անց հիմնվեց Ղզլարի գավառական ուսումնարանը՝ իր հարուստ գրադարանով ու հարյուրից ավելի աշակերտներով:

Յյուսիսային Կովկասի երկրորդ հայաշատ կենտրոնում՝ Սոգորկում, 1920 թ. բացվեց գավառական ուսումնարան, որի աշակերտների մեծ մասը հայեր էին: 19-րդ դարի երկրորդ կեսին ուսումնակրթական տարրեր բնույթի դպրոցներ հիմնվեցին Ստավրոպոլում, Եկատերինոպարում, Վասիլկավլյագում, Գրոզնիում, Սուլլը Խաչում, Դերբենդում և այլ բնակավայրերում: Յյուսիսային Կովկասի հայարնակ վայրերում 1912 թ. տարրական դպրոցների թիվը հասնում էր 34-ի, ուր սովորում էր 2300 երեխա:

Յյուսիսային Կովկասի հայկական համայնքներում մեծ էր հետաքրքրությունը նաև թատերական արվեստի նկատմանը: XIX դ. կեսերին ուսանողների ուժեղով ներկայացումներ էին կազմակերպվում: Ղզլարում և հայահոծ մյուս բնակավայրերում կարևոր դեր էին կատարում սիրողական թատերախմբերը: Ղզլարում 1867 թ. կառուցվեց 600 տեղանոց թատերասրահ: Կազմակերպվեցին գրական-երաժշտական հանդեսներ: Գործում էին երգչախմբեր: Յյուսիսային Կովկասում իրենց առաջին քայլերն են կատարել նշանավոր թատերական գործիք Ե. Վախթանգովը (Վասիլկավլյագ), երաժշտագետ Ռ. Մելիքյանը (Ղզլար) և այլ անվանի արվեստագետներ [11]:

Յյուսիսային Կովկասի հայ համայնքները մշակութային կապերի մեջ էին հայրենիք, ռուսահայ մշակութային այլ օջախների հետ: Այդ կապերի շնորհիվ Յյուսիսային Կովկասի համայնքները իրազեկ էին հայ իրականության մեջ կատարվող հասարակական-քաղաքական և մշակութային իրողություններին, որոնց էլ բերում էին իրենց մասնակցությունը:

Այսպիսով՝ Յյուսիսային Կովկասի հայկական համայնքները, օգտվելով ռուսական կառավարության ընդունած բարենպաստ պայմաններից, մեծ հաջողությունների հասան առևտրատնտեսական ոլորտում: Նշված համայնքներում լայն զարգացում ապրեցին տնտեսության տարրեր ճյուղերը՝ արիեստներն ու արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, մանավանդ ներքին ու արտաքին առևտուրը: Նրանք կարևոր դեր ունեցան Յյուսիսային Կովկասի տնտեսության յուրացման ու առաջադիմության գործում:

19-րդ դարի 60-70-ական թթ. ցարիզմի կողմից վերացվեցին հայկական համայնքների ինքնակառավարման վերջին մարմններն ու նախկինում տրված արտոնությունները: Յյուսիսային Կովկասի հայկական համայնքներին, նրանց ազգային-մշակութային կյանքին ու ինքնությանը հասցված լրջագույն հարվածներ էին նաև խորհրդային իշխանությունն ու համակարգը:

1917 թ. Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջման իրադարձություններով ամփոփվեց Ռուսաստանի, այդ թվում՝ նաև Յյուսիսային Կովկասի հայկական համայնքների պատմության ցարական շրջափուլը:

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջմամբ գծվեց նաև ռուսահայ համայնքների, այդ թվում՝ Յյուսիսային Կովկասի հայկական համայնքների պատմության ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների ժամանակագրական սահմանագիծը, որն իրականացվել է խորհրդահայ պատմագիտության կողմից: Նշված իրողությունը խորհրդանշեց համայնքային կյանքի ավարտը:

Յյուսիսային Կովկասի հայ համայնքների պատմությունը չի ենթարկվել առանձին հետազոտության, քանի որ դիտարկվել է ԽՍՀՄ ժողովուրդների միասնական, ընդհանրական պատմության մաս:

Խորհրդային իշխանությունների ազգային քաղաքականությունը բացասական հետևանքներ ունեցավ խորհրդային Յայաստանի սահմաններից դուրս ամրող հայության, այդ թվում՝ Յյուսիսային Կովկասի հայության համար: ԽՍՀՄ-ում ազգային հի-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մունքների վրա ստեղծելով առանձին հանրապետություններ ու միավորումներ՝ խորհրդային իշխանությունները միևնույն ժամանակ անտեսեցին այդ հանրապետություններում ու երկրամասերում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Խորհրդային իշխանության պայմաններում ազգային իշխանությունները որակվեցին բոլորու կողմանից, ազգային պայմաններում ազգային իշխանությունները ու ազգային իշխանությունները մեջ տարվող աշխատանքները, ինչպես մյուս վայրերում, այնպես էլ Հյուսիսային Կովկասի հայկական համայնքներում իրականացնում էր Ազգությունների ժողովների ազգային բաժանումների միջոցով։ Քանի որ մեր հետագությունն ընդգրկում է Հյուսիսային Կովկասի հայ համայնքների պատմությունը, ուստի ուստիմասիրության շրջանակից դրւում է մնացել Անդրկովկասի ԽՖՍԴ հայության հասարակական-քաղաքական, մշակութային-կրթական իշխանությունը անդրշական պատմության քննությունը։ Անդրկովկասի հայությունը, նրա բնակության և ազգային-մշակութային միջավայրը սերտորեն առնչվում է ին Յայաստանին և բազմաթիվ թեկերով շարկապված էն հայ իրականության ընդհանրապես։

Խորհրդային համակարգի քաղաքականությունը մշակութային-կրթական, սոցիալ-հասարակական բնագավառներում, ինչպես նաև կրոնի ու եկեղեցու նկատմամբ մերժողական վերաբերմունքը լրջագույն սպառնալիք դարձան հայ ազգային-համայնքային կյանքի համար։

1920-ական թթ. երկրորդ կեսից ամբողջատիրական համակարգի պայմաններում անկում ապրեց խորհրդահայ համայնքների մշակութային կյանքը։ Փակվեցին Ռուսաստանի հայկական կենտրոններում գործող ազգային մամուլի օրգանները, որոնք նաև համայնքային կառույցների պաշտոնաթերերն էն, լուծարվեցին կամ վերակազմվեցին տասնյակ հայկական դպրոցներ, որոնք դեռևս գործում էն 19-րդ դարում։ Յետապնդուների և ունեցրկման ենթարկվեց հայ եկեղեցին։ Խորհրդային իշխանությունը ծանր հարված հասցրեց համայնքային-հասարակական կյանքին։

Խորհրդային իշխանությունն անմիջապես ձեռնամուխ եղավ կրթական ոլորտի վերակազմնանը, ինչն էլ խորհրդային դպրոցի ձևավորման հիմք դարձավ։ Խորհրդային իշխանության առաջին տարիներին միութենական հանրապետությունների հայկական դպրոցական ցանցը կրճատվեց, և միայն 1930-ական թթ.՝ երկրի տնտեսական կայունացումից հետո, ՌԽՖՍՀ հայաշատ կենտրոններում՝ Հյուսիսային Կովկասում, Շունում և այլուր, այդ ցանցն ընդլայնվեց։

Խորհրդային հանրապետությունների հայահոծ շրջաններում տեղական կուսակցական օրգանների կազմում գործել են հայկական սեկցիաներ, որոնք զգալի աշխատանք են տարել հայության շրջանում՝ ներկայացնելով, քարոզելով և ներգրավելով վերջիններին խորհրդային գաղափարախոսության դաշտ։ ԽՍՀՄ-ում կիրառվող ռուսականացման քաղաքականությունը և համայնքներում հայկական ազգային հաստատությունների բացակայությունն անհնարին էն դարձնում տեղի հայության ազգային-մշակութային հետագա գործունեությունը։ Անհամենմատ թույլ էն ազգամշակութային ծովումն ու ներգրածունեությունը մահմեդական բնակչություն ունեցող Հյուսիսային Կովկասի հայկական համայնքներում։

1920-1930-ական թթ. խորհրդահայ համայնքներում հասարակական կյանքն ուղղորդվում էր Միությունում ընթացող գործընթացներին համահուն։ Յայությունը ներգրավեց սոցիալ-արտադրական նոր հարաբերությունների մեջ՝ իր վրա թեկերով նաև բռնաճնշումների քաղաքականության, արսորի ու տեղահանության ողջ ծանրությունը։ Այսպես, Հյուսիսային Կովկասի հայկական շրջանների կուսակցական-պետական ղեկավարությունը մեղադրվել է խորհրդային տնտեսության և հասարակական հարաբերությունների կազմակերպման ուղղական գործունեության իր «փորձերի», տրոցիկստական-բուխարինյան խմբավորման, հակահեղափոխական-դաշնակցական շրջանակների, անգամ ծապոնա-գերմանական ուժերի հետ վնասարարական գործողությունների մեջ։

1920-1930-ական թվականները ԽՍՀՄ հայահոծ համայնքներ ունեցող տարա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Ժաշրջանների համար (Յուլիսիսային Կովկաս, Դոն) դարձան արդյունաբերացման և գյուղատնտեսության վերակառուցման տարիներ:

1920-1930-ական թթ. ժողովրդագրական գործընթացները ԽՍՀՄ-ում զգալիորեն պայմանավորված էին նաև երկրում ծայր առաջ համատարած սովոր գործոնով: Խորհրդային իշխանության առաջին տարիներն ուղեկցվեցին սոցիալ-տնտեսական հարաբերությունների քայլայմամբ, բնակչության տեղաշարժերով, թվաքանակի աճմամբ, որոնք հեղափոխության և քաղաքացիական պատերազմի, 1920-1930-ական թթ. տեղ գտած սովոր ու ծրագրային բռնի վերաբնակեցման արդյունք էին:

1920-1930-ական թթ. ԽՍՀՄ-ում տեղ գտած հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ցնցումներն ուղղակիորեն իրենց ազդեցությունն ու հետևանքները բռնիցին Միության ժողովուրդների, այդ թվում՝ հայության վրա: Փոփոխվեց և խնդրահարույց դարձավ երկրում ժողովրդագրական իրական պատկերի վերհանումը:

Առաջին աշխարհամարտի ու Յայոց ցեղասպանության, 1917 թ. ռուսական հեղափոխության ու սկզբած քաղաքացիական պատերազմի արդյունքում ռուսահայ զայրօշախնները համալրվեցին այստեղ ապաստան գտած տասնյակ հազարավոր հայ փախստականներով: Անընդհատ տեղաշարժերի արդյունքում ընդայնվեց հայության բնակության աշխարհագրությունը:

Առաջնահատուկ կարևորություն և ամերածեցտություն է ներկայացնում 1920-1930-ական թթ. խորհրդային հանրապետություններում բնակվող հայության թվի, տեղաբաշխման շրջանների, լեզվական պատկանելիության, գրագիտության աստիճանի ու այլ գործընթացների վերհանումը: Այդ խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հետևելու բախտորոշ դարձած 1915-1920-ական թվականներից հետո հայերի զանգվածային տեղաշարժներին, թվին և այլ գործընթացներին, ինչպես նաև հստակեցնելու Յայրենական մեծ պատերազմի նախօրյակին ԽՍՀՄ հայության շրջանում կատարված նույն այդ գործընթացների շարժընթացը:

1920-1930-ական թթ. խորհրդահայ համայնքների պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն է ծեռք բերում հայության թվաքանակի և տեղաբաշխման շրջանների բացահայտումը՝ ըստ պաշտոնական վիճակագրական նյութերի, քանի որ դրանք ամհնարին է կատարել կամերալ ցուցակագրումներով ու հաշվառման այլ ձևերով:

Վերոհիշյալ ժամանակագրական շրջանակներում նախ խորհրդային Ռուսաստանում, ապա ԽՍՀՄ-ում անցկացվել են 5 մարդահամարներ, որոնց համապատասխան վիճակագրական տվյալների ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է դառնում լույս սփռել հայությանը վերաբերող գործընթացների ու դրանց զարգացման շարժընթացի վրա: Նշված հիմնահարցերի կարևորությամբ են պայմանավորված հետագա բազմաթիվ գործընթացները, որոնցում ներգրավված էր հայությունը:

Խորհրդահայ համայնքների պատմության ուսումնասիրությունն ունի քաղաքական կարևոր նշանակություն, քանի որ ԽՍՀՄ-ում «վերակառուցման» տարիներից սկսած և փլուզումից հետո ընկած ժամանակաշրջանում լիովին բացահայտվեցին «ազգային քաղաքականության» սնամնկությունն ու կոնֆլիկտայնությունը, նախկին միհութենական հանրապետություններում գլուխ բարձրացրեց ազգայնականությունը: Անդրկովկասի, Միջին Ասիհայի հանրապետություններում, Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող հայությունը հայտնվեց ազգայնական դրսևորումների թիրախում. մնջտեղ էին բերվում ոչ տիտղոսակիր ազգ լինելու, կրոնական-ազգային, ավելի բարեկեցիկ ապրելու և բազմապիսի այլ «նկատառումներ», նույնիսկ տեղ գտած բռնությունների և արտաքսման դեպքեր: Այս նկատառումներով պայմանավորված՝ առանձնակի կարևորվում են Յուլիսիսային Կովկասում բնակվող հայության պատմության ուսումնասիրությունն ու ներկայացումը, նրանց այստեղ հաստատվելու, գործունեության ու դերի վերհանումը:

Յայ պատմագիտության մեջ խորհրդահայ համայնքներին նվիրված գիտական ա-

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

ռանձին ուսումնասիրությունները բացակայում են: Որոշ ուսումնասիրողներ ներկայացրել են խորհրդահայ տարրեր համայնքների վերաբերյալ մասնակի, հպանցիկ ակնարկներ: Խորհրդահայ համայնքների պատմության ամբողջական կամ խորհրդային ժամանակաշրջանի որևէ պատմափուլն ընդգրկող ուսումնասիրություն կատարված չէ: Թերևս բացառություն են կազմում ։ Ալեքսանյանի երկու ծավալուն մենագրությունները, որոնք վերաբերում են 1917 - 1991 թթ խորհրդահայ համայնքների պատմությունը: Մինչեղափոխական Ուսաստանի հայ գաղթօջախների սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական պատմության բազմաթիվ իրողություններ հանգամանալիորեն ուսումնասիրվել են հայ գաղթօջախների պատմության խնդիրներով գրաղվող պատմաբանների կողմից*:

Խորհրդահայ համայնքների 1920-ական թթ. պատմության որոշ խնդիրների, մասնավորապես Կրասնոդարի երկրամասի հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական և կրթական հիմնահարցերի ուսումնասիրմամբ զրադվել է Վ. Աղորաշյանը: Խորհրդահայ համայնքների պատմության հետազոտության համար նոր փուլ ազգարարվեց 1990-ական թթ., երբ մի շարք հետազոտողներ (Մ. Մինասյանը, Վ. Գրիգորյանը, Ժ. Անանյան, Վ. Խաչատուրյանը, Ս. Դերեցչենկոն և ուրիշներ) ձեռնամուխ եղան նորովի արժևորելու ուսահայ տարրեր գաղութների պատմությունը, հրատարակեցին նոր աշխատություններ*: Այդ հրատարակություններն իրենց ժամանակագրական շրջանակը հասցնում են մինչև խորհրդային առաջին տարիները և խորհրդահայ համայնքների պատմության վերաբերյալ համապարփակ ու բազմակողմանի ուսումնասիրություններ չեն: Զնյան բացառություններով այդ աշխատությունները կրկնում են նախորդ շրջանի ուսումնասիրությունները, բացակայում է նոր նյութերի և խորհրդահայ համայնքների պատմության բազմակողմանի քննությունը:

Վերջին շրջանում ՀՀ ԳԱԱ պատմության հիմնախոտութի հայ գաղթօջախների պատմության բաժնի աշխատակիցների ջանքերով հրատարակվել են ուսահայ գաղթօջախների մինչխորհրդային շրջանի պատմությունն ընդգրկող արժեքավոր աշխատություններ*, որոնցում ներկայացված են այդ գաղութների պատմությունը, որը, սակայն, պարտվում է 1917 թ. հրադարձություններով, առանձին դեպքերում հպանցիկ ներկայացված են մինչև 1920 թ. լճակած հրադարձություններուն: «Հայ սիյուռք» հանրագիտարանը ներկայացնում է Ուսաստանի հայ գաղթօջախների պատմության մինչեղափոխական շրջանը, մասնակիորեն նաև բաղաքացիական պատերազմի շրջանը:

* Տե՛ս Ա. Աբրահամյան, Համարոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Երևան, 1964, հ. 2, Երևան, 1967, Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1801-1917, Երևան, 1970, նույնի՝ Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, Խարկովսկոյ զեմլե, Երևան, 1974, Վ. Բարխուտարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967, նույնի՝ Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, հ. 2, (1860-1917 թթ.), Երևան, 1985, Ժ. Անանյան, Արմянская колония Григориополь, Ереван, 1969, Л. Погосян, Армянская колония Армавира, Ереван, 1981, А. Григорьянц, Армяне в Средней Азии (вторая половина XIX в. - 1917 г.), Ереван, 1984, В. Хачатуրян, Образование армянской колонии в Астрахани, 1983, № 4, В. Адобашян, Из истории армянского населения на территории Краснодарского края, ԼՀԳ, 1968, № 7, Ս. Ս. Արշարունի, Մուսկվայի հայ մամուլը, Երևան, 1971, Գ. Գևորգյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն, գիրը 10, Երևան, 1980:

* Տե՛ս Մ. Մինասյան, Армяне Причерноморья, Ереван, 1990, В. Григорянц, Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Ереван, 1994, Ж. Ананян, В. Хачатуров, Армянские обиданы России, Ереван, 1993, А. Терещенко, Армянское население Донском и Северо-кавказском регионах в 20-х годах XX века, д'Р, 1992, № 2-3, Ա. Դավթյան, Հայկական և հայախանքնակավայրերը Հյուսիսային Կովկասում, Երևան, 2001, Վ. Բարխուտարյան, Համարոտ ուրվագիծ ուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Երևան, 2006:

* Տե՛ս «Հայ սիյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 1, Երևան, 2003, հ. 2, Երևան, 2003:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Դաջորդ՝ «Դա գաղթաշխարհի պատմություն» կոլեկտիվ երկիաստոր աշխատությունը հայ համայնքների պատմությունը հասցնում է մինչև 1920 թվականը: Առաջին հատորում ներկայացված է Ուլսաստանի հայ համայնքների պատմությունը, որը, սակայն, նախկինում կատարված ուսումնասիրությունների համարոտ շարադրանքն է: Երկիաստորյակը ներկայացնում է ընդամենը 1917-1920 թթ. ընդգրկող առանձին իրադարձություններ, այն էլ՝ ոչ բոլոր տարածաշրջանների հայության վերաբերյալ:

Մարդահամարների նյութերի հիման վրա հնարավոր է դարձել ներկայացնել նախկին ցարական Ուլսաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող հայության թիվը, տեղաբաշխվածությունը՝ ըստ նահանգների, երկրամասերի, սեռային ու տարիքային կազմները, գրագիտության աստիճանն ու լեզվական պատկանելիությունը:

Դայոց ցեղասպանությունը և Արևմտյան Դայաստանից ու Թուրքիայից հայության տարիանումը, մուսավաթականների կողմից հրականացված կոտորածներն ու արտաքսումն Արևելյան Անդրկովկասից դարձան հայրենազրկված հայության տեղաշարժերի պատճառ: Այս ողբերգությունների հետևանքով հայության զգալի հատվածն իր ապաստանը գտավ քաղաքացիական պատերազմի բռնուրություն գտնվող Ուլսաստանում, մասնավորապես Դյուլսիսային Կովկասում, ուստի միանգամայն կարևորվում են այստեղ ապաստանած հայության թվաքանակի ծզգրտումը, տեղաբաշխվածության շրջանների վերհանումը և այլն: Անհրաժեշտ է նշել, որ 1920-1930-ական թվականները երկու աշխարհամարտերի միջև ընկած կարևոր պատմական մի ժամանակաշրջան են, երբ ընդամենը քառորդ դարի ընթացքում հայությունը կրեց մարդկային վիթխարի կորուստներ՝ սփոյլելով տարբեր երկրամասերում:

ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարների արդյունքների հիման վրա հնարավոր դարձավ վերջնականապես ծզգրտված տվյալներ ունենալ հայության արևելյան հատվածի կորվածքով: ԽՍՀՄ ԿՎՎ հրատարակություններն իրավամբ սկզբնադրյութային նշանակություն ունեն, քանի որ արտացոլում են պաշտոնական տվյալներ: Միաժամանակ մարդահամարների քաղաքական նշանակությամբ պայմանավորված հարկ է որոշակի վերապահումով նոտենալ մասնավորապես 1930-ական թթ. անցկացված մարդահամարների տվյալներին, քանի որ ԽՍՀՄ-ում տեղ գտած բռնաճնշումների, ծրագրային տեղահանությունների, կոլեկտիվացման և այլ գործընթացներով պայմանավորված 1930-ական թթ. մարդահամարներն իրականացվել են որոշակի «պետական պատվերի» շրջանակում:

1920-1930-ական թթ. ԽՍՀՄ, այդ թվում Դյուլսիսային Կովկասի հայ ազգաբնակչության թվի, նրա աճի շարժմանը, տեղաբաշխման և այլ գործընթացների վերաբերյալ, քացի վերոհիշյալ նյութերից, առկա են նաև այլ մարդահամարների համեմատական նյութեր, ինչպես նաև թեմատիկ հետազոտություններ:

Ուսումնասիրության համար սկզբնադրյուրի նշանակությամբ նյութերի հաջորդ խումբը կազմում են երկրում խորհրդային իշխանության հաստատման և քաղաքացիական առճակատման պատմությունն ամփոփող ժողովածուները, տարբեր համագումարների նյութեր և տարեկան այլ հրատարակություններ*:

* ՏՇԱ Իտоги Всесоюзной переписи населения 1959 года, Туркменская ССР, Москва, 1963, М. Вудро, Население Москвы (по материалам переписей населения 1871-1970 гг.), Москва, Статистика, 1976, В. Б. Игнатьева, Национальный состав населения Якутии, Якутск, 1994, «Լրաբեր հասարակական գիտությունների», հ. 12 (432), Երևան, 1976: Декреты Советской власти, т. I, Москва, 1957, т. II, Москва, 1959, т. III, Москва, 1964, т. IV, Москва, 1968, Борьба за Советскую власть на Кубани в 1917-1920 гг., сб. Док. и мат., Краснодар, 1957, Борьба трудящихся масс за установление и упрочение Советской власти на Ставрополье (1917- апрель 1921 гг.), сб. Док. и мат. Ставрополь, 1968, Борьба за власть Советов на Дону 1917-1920 гг., сб. Док., Ростов-на-Дону, 1957, Резолюции первой Всеукраинской армянской беспартийной конференции (23-26 янв. 1926 г.), Симферополь, 1926. Армянский настолъный календарь на 1919 г. Ростовъ-на-Дону, 1918, Ուլսահայ հոգևորականութեան

ՄԵՐՈՒՊ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Վերոնշյալ աշխատություններում մասնավորապես ներկայացված են 1917 թ. հեղափոխությունից հետո Ուսուաստանում ծավալված քաղաքացիական պատերազմի տարիներին հայ բնակչությանը և գաղթականությանը վերաբերող խնդիրներ, քաղաքացիական պատերազմին հայության մասնակցությունը, հայ եկեղեցուն և դպրոցին վերաբերող հարցեր։ Նշված հետազոտողների շարքում կան ինչպես հայ, այնպես էլ ճախկին միութենական հանրապետությունների առանձին ուսումնասիրողներ*։

Ուսումնասիրությունն իրականացնելիս կարևոր դեր է վերապահվել Յայաստանում, Սփյուռքում և արտերկրում հրատարակված քազմաքնույթ գիտական, հասարակական և հանրամատչելի հանդեսներին*։ Դրանք միութենական հանրապետություններում բնակվող հայության հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող ուսումնասիրություններ են, գիտական հոդվածներ և փաստաթղթեր։

Յյուսիսային Կովկասի հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունն գործնական հիմքերի վրա դրվեց միայն հետխորհրդային տարիներին, երբ նախկին միութենական հանրապետությունների տարածքի հայության քվարանակը զգալիորեն աճեց, հիմնվեցին նոր համայնքներ, ընդլայնվեց հայության բնակության աշխարհագրությունը, ձևավորվեցին համայնքային-մշակութային տարատեսակ կառույցներ։ Ինտեգրացիոն գործնաբացները հետխորհրդային տարածքում, միգրացիան ու սոցիալ-տնտեսական հիմնահարցերը լրացրցից խթան դարձան Յյուսիսիային Կովկասի հայության պատմության ուսումնասիրման, գիտամշակութային կապերի պահպանման ու ամրապնդման համար։ Նախկին խորհրդային հանրապետություններում, այդ թվում՝ Յյուսիսային Կովկասում բնակվող հայության անցյալն ու ներկան տարրեր դրսւորումներ, զարգացումներ են ունեցել և ունեն, և դրանց ուսումնասիրությունը գիտագործնական ու սոցիալ-քաղաքական կարևոր նշանակություն է ստացել։

ԽՄՀՄ տարածքի, այդ թվում՝ Յյուսիսային Կովկասի հայկական համայնքների համարուտ պատմությունն առաջին անգամ ուսումնասիրության առարկա է դարձել հետխորհրդային տարիներին ՅՅ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցների կողմից։ Այդ աշխատանքների արդյունքում հրատարակվել են առաջին ամփոփ աշխատությունները^{*5}, տասնյակ գիտական հոդվածներ են տպագրվել հանրապետության և

համագումարի (1917 թ. յունիս) բանաձեւեր, Ս. Էջմիածին, 1917։

* Տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ուսուաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, Վ. Բելօզերօվ, Этическая карта Северного Кавказа, Москва, 2005։

* Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1983, № 2 (66), 1967, № 3 (18), 1970, № 3 (27), 1979, № 3 (55), 2006, № 1 (107), № 2 (108), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1975, № 6 (390), 1978, № 12 (432): «Վէմ», Փարիզ, 1934, յունուար-փետրուար, սեպտեմբեր-հիւստեմբեր, 1935, յունուար-ապրիլ, 1938, յունուար, յունուար-մայիս, «Ալիք», Պյատի-գորսկ, գիր 1, 1919, գիր 2, 1920, «Քուրա», Մոսկվա, 1923, № 1, № 2, № 3, 1928, «Լրաբեր Հայաստանի օգնության կոմիտեի Մոսկվայի ճյուղի», Մոսկվա, 1924, № 1, «Բազմավիճակ», Վենետիկ-Ս. Ղազար, թիվ 1-4, 2003։

* Տե՛ս Հ. Ալեքսանյան, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, 2011, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երկրորդ հրատ., Երևան, 2014, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., խմբ.⁶ Կ. Խաչատրյան, Երևան, 2016, Կ. Խաչատրյան, Երևան, 2016, Հայաստանի պատմության մասին պատմության համապատասխան պատմություններ, Երևան, 2011, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երկրորդ հրատ., Երևան, 2014, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., խմբ.⁷ Կ. Խաչատրյան, Երևան, 2016, Հայաստանի պատմության մասին պատմության համապատասխան պատմություններ, Երևան, 2011, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երկրորդ հրատ., Երևան, 2014, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., խմբ.⁸ Կ. Խաչատրյան, Երևան, 2016, Հայաստանի պատմության մասին պատմության համապատասխան պատմություններ, Երևան, 2011, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երկրորդ հրատ., Երևան, 2014, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., խմբ.⁹ Կ. Խաչատրյան, Երևան, 2016, Հայաստանի պատմության մասին պատմության համապատասխան պատմություններ, Երևան, 2011, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երկրորդ հրատ., Երևան, 2014, նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., խմբ.¹⁰

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

արտերկրի գիտական համեսներում, ժողովածուներում:

Այդ տեսանկյունից արժեքավոր հետազոտություններ են Յ. Ալեքսանյանի հեղինակած երկու աշխատությունները, որոնցում համարոտ անդրադարձ կա Յուլիսիսիային Կովկասի հայ համայնքների պատմությանը, մասնավորապես 20-րդ դարի ուսումնասիրվող շրջանում այդ համայնքների հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքին, պատմաժողովրդագրական գործընթացներին առնչվող բազմաթիվ հիմնախնդիրներին: Երկու աշխատություններում էլ հեղինակը բազմաթիվ սկզբանադրյուրների և գրականության քննական ուսումնասիրման արդյունքում ներկայացրել է արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցում հանգամանորեն ցույց է տվել ՅիւՇ սահմաններից դուրս՝ միութենական հանրապետություններում քննակվող հայկական համայնքների և հայարձնակ կենտրոնների հայության պատմաժողովրդա-գրական գործընթացները, կրթամշակութային կյանքն ու համայնքների վերելքն ու անկումը, համարոտ անդրադարձ է կատարվել նաև Յուլիսիսիային Կովկասի հայ համայնքների պատմությանը:

Յուլիսիսիային Կովկասի հայ համայնքների հետ Յայաստանի ամկախ հանրապետության շփումներին անդրադարձել ենք մեր մենագրությունում*: Յուլիսիսիային Կովկասի հայ համայնքների հետ հայրենիքի կապերի որոշ դրվագներ քննության են ենթարկված նաև Ա. Եղիազարյանի, Մ. Անանյանի, Ա. Յովհաննիսյանի, Մ. Յովսեփյանի և Յ. Վարդանյանի հեղինակած «Յայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը» կոլեկտիվ մենագրության մեջ: Յուլիսիսիային Կովկասի հայ համայնքների, նաև Արքազիայի 1917-1921 թթ. պատմության հարցերին է անդրադարձել Բ. Մայլյանն իր մենագրությունում: Յուլիսիսիային Կովկասի հայ համայնքների ժողովրդագրական գործընթացներն իրենց մենագրություններում քննության առարկա են դարձել նաև ՀՀ սփյուռքի նախկին նախարար Յ. Զակորյանն ու Վ. Խոջաբեկյանը⁶: Բացի նշված աշխատություններից՝ հրատարակված «Յայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի IV հատորի երկու գորերի առանձին գլուխներում ենթագլուխներով ներկայացվել են «Յայությունը խորհրդային հանրապետություններում» բաժինները, որոնցում համարոտ անդրադարձ կա Յուլիսիսիային Կովկասի հայ համայնքների պատմությանը, ինչը բացակայում էր խորհրդային տարիներին կազմված նախկին ակադեմիական հրատարակության ութիատորյակի էջերում:

Յատկանշական է, որ զգալի հետազոտական աշխատանքներ են իրականացվում նաև հետխորհրդային երկրների ուսումնական և գիտահետազոտական տարրեր կենտրոններում, լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ ու գիտական գրականություն, որոնք նպաստում են հայկական համայնքների պատմության նորովի լուսաբանմանը, արխիվային ու վավերագրական նյութերի լայն շրջանառությանը:

Յայաստանի և արտերկրի գիտնականների կողմից կատարվող այս հետազոտությունները վերաբերում են խորհրդային հանրապետություններում, Յուլիսիսիային Կովկասում հայության պատմաժողովրդագրական, էթնուսոցլոգիական հիմնահարցերին, որոնք մեծ հետաքրքրություն ու կարևորություն են ներկայացնում ինչպես ՀՀ, այնպես էլ այդ հանրապետությունների (ՊԴ, Ուկրաինա, Վրաստան և այլն) գիտական ու հասարակական-քաղաքական շրջանակների համար:

Յուլիսիսիային Կովկասի հայկական համայնքների պատմության ուսումնասիրության կարևոր կողմերից է այն անդրաժեշտությունը, որով հաստատվում էր այդ հա-

* Տե՛ս Է. Մինասյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.), Երևան, 2018:

*Տե՛ս Հ. Հակոբյան, Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017, Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերաբերությունը և տեղաշարժերը XIX-XX դարում, XXI դարի շեմին, Երևան, 2001:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մայնքների գոյությունն ու շարունակական ընթացքը, մերօրյա բազմահազարանոց համայնքների առկայությունը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ խորհրդային կարգերի հաստատմամբ ամբողջովին չմարեց Հյուսիսային Կովկասի հայության համայնքային ազգային կյանքը, չձևավորվեց մեկ «խորհրդային ժողովուրդ կամ պատմական նոր հանրույթ», թեև տեղի ունեցավ հայկական համայնքների ազգային դիմագծի մասնակի կորուստ, ծովում: Չարկ է նկատել, որ ավանդական համայնքներում առավելապես նկատելի էր իմտեգրումը տեղի իրականությանը:

Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները միասնական պատմական կենսագրություն են թողել նաև Ռուսական կայսրության, ապա նաև խորհրդային ժամանակաշրջանում երկու դար գտնվելով միևնույն մշակութային, հասարակական և սոցիալ-քաղաքական միջավայրում:

1941-1945 թթ. Չայրենական պատերազմում կրած կորուստները, հետպատերազմյան առաջին տարիներին քաղաքական հետապնդումներն ու արսորդ նկատելի փոփոխություններ մտցրին Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների կենսագործունեության մեջ: Թեև որոշ չափով թուլացան հայածանքները եկեղեցու և հավատացյալների նկատմամբ, սակայն եկեղեցական կառույցների հետագա ավերումն ու փակումը շարունակվեցին, համայնքների հայկական դպրոցները կրծատվեցին, ինչն էլ հանգեցրեց մայրենի լեզվի տիրապետման մակարդակի իջեցմանը, ազգային մշակութային հաստատությունների թվաքանակի նվազմանը:

Քաղաքական զանգվածային բռնաճնշումները ԽՄՀՄ-ում դադարեցին Ի. Ստալինի մահից հետո, ինչին հաջորդեց բռնադատվածների արդարացման և մասնակի վերադարձի գործընթացը: Արդեն 1956 թ. մարտին ԽՄՀՄ Գերիմի հայերը, հույները և թուլարները, երկու տարի անց նաև թաթարները ազատվեցին արսորավայրերին հատուկ պարետային կանոնակարգից՝ առանց Ղրիմի նախկին բնակության վայրեր վերադառնալու իրավունքի: Այդուհանդերձ, դրիմահայերի շրջանում վերադարձի հույս հայտնվելուն պես նրանցից շատերն անօրինական ճանապարհով վերադարձան Ղրիմ, մի մասն էլ՝ հարակից Կրասնոդարի և Ստավրովոյի երկրամասեր [12]:

1940-1950-ական թթ. ԽՄՀՄ-ում բռնությունների ենթարկված ժողովուրդների արդարացման և իրենց իրավունքներում վերահաստատելու գործընթացը ներառեց պետական իրավական ակտերի մի ամբողջական փաթթը: Առաջնային էր ԽՄՀՄ Գերիմի 1989 թ. նոյեմբերի 14-ի հոչակագիրը, որով անօրինական և հանցավոր էին ճանաչվում խորհրդային ժողովուրդների նկատմամբ կիրառված բռնության և տեղահանության ակտերը, դրվում էր նրանց իրավունքների ապահովության հարցը:

Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների կյանքում իրավիճակը փոխվեց, և նրանք նոր համայրում ստացան Արցախյան ազատագրական շարժման օրերին: 1988 թ. Սպիտակի երկրաշարժից Սունգայիթում, Բաքվում, Կիրովարադում, Խանլարի շրջանում Աղրբեջանի վանդալների հրեշտակոր վայրագությունների արդյունքում բռնաճնշումների ենթարկված հայությունը, ապա 1989-1990 թթ. Բաքվում և հայաշատ այլ շրջաններում կրկնվող ցեղասպանությունից մի կերպ փրկվածները արտագաղթեցին Ռուսաստանի Դաշնություն, արտերկիր, սակայն հիմնական մասը ապաստան գտավ Հյուսիսային Կովկասի հայկական համայնքներում՝ համալրելով դրանք: 1988 թվականից սկսած՝ ուժեղացած դեպի Ռուսաստան, մասնավորապես Հյուսիսային Կովկաս արտագաղթը: Այստեղ օքսան գտան Աղրբեջանից բռնագաղթված փախստականներն ու երկրաշարժի գոտուց տուժած բնակչության մի ստվար զանգված: Եթե նկատի առնենք, որ Չայաստանի սահմանամերձ գոտիների գյուղական բնակչությունը այդ օրերին բնակություն հաստատած փախստականների և տեղական բնակչության մի մասը 1990-1992 թթ. չփականացած Աղրբեջանի կողմից ծեռնարկված զինված հարձակումներին և ոմբակոծություններին, Հյուսիսային Կովկաս արտագաղթի պատկերն ավելի ամբողջական կդառնա: 1988-2000 թթ. Չայաստանից նախկին Խորհրդային Միության այլ

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

համրապետությունների արտագաղթողների 77.0 %-ը բաժին ընկավ Ռուսաստանին, ընդ որում՝ 1988-1992 թթ. հայության 17.5 %-ը արտագաղթեց Հյուսիսային Կովկաս [3]: Ծուտով Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած այնպիսի անցանկալի երկույթներ, որոնք հայ բնակչությանը արտագաղթի առիթ տվեցին, թեև քիչ չափով: Եվ իրոք, եթե մինչև 1990 թվականը Հյուսիսային Կովկաս մեկնողները մոտ 2 անգամ գերազանցում էին այնտեղից Հայաստան եկողների ընդհանուր թիվը, ապա 1991 թ. Հյուսիսային Կովկասից Հայաստան ներգաղթողները գերազանցել են Հայաստանից Հյուսիսային Կովկաս արտագաղթողների թիվը ավելի պակաս չափով՝ 172.7 %-ով: Մինչդեռ 1992 թ. այդ հարերակցությունը նորից բարձրացել է՝ կազմելով 324 %:

Պատահական չէ, որ հայերը ՌԴ ազգությունների շարքում պաշտոնական տվյալներով զրադեցնում են 5-րդ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ 4-րդ տեղը (ռուսներից, թաթարներից և ուկրաինացիներից հետո): Նրանք առավել կենտրոնացած են մայրաքաղաք Սուվայում (շուրջ 500 հազար), Հյուսիսային Կովկասում՝ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում (համապատասխանաբար՝ 800 հազար և 400 հազար) և Ռուսություն մարզում (135 հազար): 20-րդ դարավերջին և 21-րդ դարավերջին Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների ստվարացումը, նրանց ներքաշումը հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումների հիրծանությունը մեջ որոշակի նոր ճարտահարավեր են առաջացրել՝ որոց տեղերում առաջ բերելով հակահայկական դրսւորումներ, հայության իրավունքների ուսնահարումներ, որոնց հաջող դիմագրավումը կարող է իրականացվել նաև այդ տարածաշրջանների, երկրամասերի հայկական համայնքների բազմադարյան հարուստ ու բեղմնավոր պատմության ներկայացմամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թումանյան Յ., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 156:
2. Լեռ, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 73:
3. Հայոց պատմություն, հ. III, գիրք Երկրորդ, Երևան, 2015, էջ 380:
4. Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, Երևան, 2003, էջ 349-350:
5. Տե՛ս նույն տեղում, էջ 351-354:
6. Տե՛ս նույն տեղում, էջ 381:
7. Տե՛ս նույն տեղում, էջ 354:
8. Տե՛ս նույն տեղում, էջ 381:
9. Տե՛ս նույն տեղում, էջ 369:
10. Տե՛ս նույն տեղում:
11. Տե՛ս նույն տեղում, էջ 384:
12. Ալեքսանյան Յ., Հայկական համայնքները խորհրդային համրապետություններում 1941-1991 թթ., էջ 29:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Հյուսիսային Կովկասի հայ համայնքի ծևավորման և զարգացման
պատմությունից
Էղիկ Մինասյան**

18-19-րդ դարերի ընթացքում Հյուսիսային Կովկասում ծևավորվել է հայահոծ գաղթօջախ, որն անցել է ուրույն պատմական զարգացման ճանապարհ: 20-րդ դարում Հյուսիսային Կովկասի համայնքները համալրվեցին՝ պայմանավորված մի շարք քաղաքական ու տնտեսական գործոններով: Հայերը բազմաթիվ բնակավայրերում մեծ թիվ

ՄԵՄՐՈՊ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒ 2019

Կազմեցին՝ դառնալով Յյուսիսային Կովկասի հիմնական էթնիկ խմբերից մեկը:

Դողպածում փորձ է կատարվել համահավաք կերպով ներկայացնելու Յյուսիսային Կովկասի հայության ազգային, կրոնադավանաքային, տնտեսական և այլ խնդիրները 20-րդ դարի ընթացքում: Հիմնականում անդրադարձ է կատարվել Կրասնոդարի և Ստավրովիլ երկրանասերին, որոնք ընդգրկում են Յյուսիսային Կովկասի հիմնական հատվածը:

РЕЗЮМЕ

Из истории становления и развития армянской общины на Северном Кавказе Эдик Минасян

Ключевые слова: армянская община, армянская иммиграция, Северный Кавказ, армянские общины Советского Союза, Краснодарский край, демографический процесс.

На протяжении 18-19 вв. на Северном Кавказе сложилась обширная армянская диаспора, развитие которой прошло по совершенно особому историческому пути. В 20 веке, в силу ряда политических и экономических факторов, эти общины пополнились. Во многих местных поселениях армяне составляли немалую часть жителей, заняв тем самым на Северном Кавказе место одной из основных этнических групп.

SUMMARY

From the Story of the Formation and Development of the Armenian Community in the North Caucasus Edik Minasyan

Keywords: Armenian community, Armenian immigration, North Caucasus, Armenian communities of the Soviet Union, Krasnodar region, demographic process.

During the 18th-19th centuries, a populous Armenian colony was formed in the North Caucasus, which passed a unique way of historical development. In the 20th century, conditioned with a number of political and economic factors, the communities of the North Caucasus were supplemented. Armenians constituted a large number in many settlements, becoming one of the main ethnic groups in the North Caucasus.

In the given work an attempt is made to comprehensively present national, religious, economic and other issues of the Armenians of the North Caucasus in the 20th century. It was mainly referred to Krasnodar and Stavropol regions, which encompass the main part of the North Caucasus.